«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ***Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում***

Դաստիարակ՝ Նելի Գրիգորյան

Մանկապարտեզ՝ «Սյունիքի մարզ, ք.Գորիս, Վ.Սարգսյանի անվան թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն---------- 2

Գլուխ 1 .ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ---------- 3

Գլուխ 2. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ԾՆՈՂ ԿԱՊԸ և ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ---------- 5

Գլուխ 3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ_____ 8

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ---------- 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այլևս կասկածից վեր է հասարակության նախադպրոցական դաստիարակության անհրաժեշտությունը: Միշտ էլ մանկապարտեզին ներկայացվել է բարձր պահանջներ, վերջին տարիներին՝ առավել ևս: Տարիներ շարունակ ընդգծվել է մանկապարտեզի սոցիալական գործոնը՝ ազատել մայրերին , կանանց՝ աշխատանքի համար: Հիմա իրավիճակը փոխվել է, մանկապարտեզը գնահատվում է իր մանկավարժական գործունեությամբ: Այստեղ է, որ մանկապարտեզը , ի դեմս ընտանիքի, գտնում է դաշնակից, գաղափարակից՝ երեխայի դաստիարակություն գործում:

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Ո՞վ պետք է լինի նրա նախաձեռնողը. անշուշտ՝ մանկավարժը: Նա պետք է ստեղծի ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավատ ընծայեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությանը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները:

Համագործակցության արդյունքում և՛ ծնողը և՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների , հետաքրքրությունների, համակրանքների և հակակրանքների մասին: Նրանք համատեղ պատասխանատվություն են ստանձնում համագործակցության մթնոլորտի ստեղծման համար: Հաղորդակցման կուլտուրան, փոխադարձ հարգանքը, անհատի առանձնահատկությունների ընդունումը, և որ ամենակարևորն է երեխայի շահերի ընդհանրականությունը երկու կողմերի համար, փոխշահավետ համագործակցության հիանալի հիմք են դառնում: Ընդ որում ոչ միշտ է բավարար սահմանափակվել աշխատակազմի և ընտանիքների մոտեցումների փոփոխմամբ . որոշ դեպքերում մանկավարժներն էլ, ծնողներն էլ պարտավոր են նոր հմտություններ ու գործնական գիտելիքներ ձեռք բերել բարձրորակ փոխգործողությունների մշակման նպատակով:

Երբ առաջարկվեց գրել հետազոտական աշխատանք, թեման ընտրեցի բավականին հեշտությամբ , քանի որ իմ աշխատանքային գործունեության ողջ ընթացքում այս թեման անսահման կարևոր է եղել ինձ համար ևմշատապես իմ կողմից կատարվել է մշտադիտարկում:

Աշխատանքիս բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում:

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեծ նշանակություն ունի մանկավարժների ընդունումն այն իրողության, որ ընտանիքն առաջնային դեր ունի երեխայի դաստիարակության գործում և նրա առաջին ուսուցիչն է: Մինչև նախադպրոցական տարիքին հասնելը, երեխաներն ընտանիքում արդեն իսկ բազում բաներ են սովորում՝ սկսած բաժակից խմելուց, կամ գնդակը նետելուց մինչև ընթերցանությունից հաճույք ստանալը:

Ընտանիքի ազդեցությունը մանկահասակ երեխաների զարգացման վրա դժվար է գերագնահատել:Երեխաները դաստիարակվում են իրենց ընտանիքներում և կրում են իրենց հետ կատարվող դեպքերի ներգործությունը:Ընտանիքի անդամներն են այն անձինք, ովքեր երեխաների համար կենսական կարևորություն ունեցող որոշումներ են ընդունում , սիրով շրջապատում ու կրթում նրանց: Վաղ հասակի երեխաների մանկավարժները պետք է լիովին ըմբռնեն, խրախուսեն և խորացնեն ծնողների ու երեխաների միջև գոյություն ունեցող առաջնային կապվածությունը:

Հազարամյակների ընթացքում մարդկության պատմությունն ընթացել է աճող սերնդի դաստիարակության երկու հիմնական ուղղությունների (ընտանեկան և հասարակական) զուգորդմամբ:Դրանցից յուրաքանչյուրը դաստիարակության սոցիալական ինստիտուտ է՝ երեխայի անհատականության ձևավոևման ուրույն , ինքնատիպ մեթոդներով և միջոցներով:

Անհատի կայացման գործընթացում ո՞րն է առավել կարևոր ու առաջնային՝ ընտանիքը՞, թե՞ մանկապարտեզն ու դպրոցը: Հնուց ի վեր վիճաբանություններ են գնում այս հարցի շուրջ: Ոմանք կարևորում են ընտանիքի դերը, մյուսներն առաջնություն են տալիս հասարակական հաստատություններին: Յ. Ա. Կոմենսկին մեծ տեղ է տվել մայրական դպրոցին՝ առանց դասացուցակի և ընդմիջման, առանց հանգստի ու արձկուրդի մայրական դասերին:

Ընտանեկան դաստիարակությունը բնորոշվում է խոր հուզականությամբ և ինտիմ բնույթով: Նրա <<ուղեկիցը>> զավակների հանդեպ ծնողական սերն է և պատասխան զգացումը՝ կապվածություն, վստահություն, քնքշություն:

Դաստիարակությունն ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգործությունն արդյունավետ է երեխայի նյարդային համակարգի ձևավորման համար:

Ընտանիքն ավելի լայն հնարավորություն ունի երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ու տարաբնույթ ձևերում՝ կենցաղային, աշխատանքային, տնտեսական, հաղորդակցական-դաստիարակչական:

<<Երեխան ընտանիքի հայելին է>> արտահայտությունը զարմանալիորեն դիպուկ կերպով բնութագրում է երեխայի կողմնորոշումը այն հոգևոր և բարոյական սկզբունքների նկատմամբ, որոնք որդեգրվել են նրա հարազատների կողմից:Յուրաքանչյուր ընտանիք ունի իր պատկերացումները բարու և գթասրտության մասին: Եթե երեխայի շուրջը <<թույլատրելի>> է համարվում ստի, կեղծիքի ու դաժանության առկայությունը, դժվար թե այդ երեխան զերծ մնա դրանց ավերիչ ազդեցությունից:

Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց <<կենսական դասերին>>՝ երեխան կամաց-կամաց յուրացնում և տիրապետում է վարվելակերպի, փոխհաղորդակցման մշակույթին: Համառ մայրը կարող է տառապել որդու համառության պատճառով, <<մարտական >> հայրը դատապարտել ինքն իրեն ՝ լսելով երեխայի կռվարարության մասին բողոքները: Իզուր չէ, որ մեծ մանկավարժներից շատերը կարծել են, որ ընտանեկան դաստիարակությունն ամենից առաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Մխիթար Գոշը (12-րդ դար) նշում էր, որ զավակների զանցանքների և հանցանքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները: Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարություն, ազնվության և մարդասիրության սերմեր: Երեխան աչքերը բացելով տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունը, երեծայի հետ շփումը ազդում են նրա հետագա զարգացման վրա, նույնիսկ շատ վաղ տարիքում, երբ կարող են չգիտակցվել երեխայի կողմից:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ԾՆՈՂ ԿԱՊԸ և ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետազոտության թեման ընտրելու գլխավոր դրդապատճառը մի իրական պատմություն է, որի հերոսը իմ խմբի հնգամյա Էրիկն է: Մի օր Էրիկի մայրն ինձ ահաբեկված պատմեց այն մասին, որ երեխան վերջերս լուցկիով խաղալու անսանձ հակումներ է ձեռք բերել և նա ոչ մի կերպ չի կարողանում երեխային զերծ պահել այդ վնասակար սովորությունից՝ ընդհուպ մինչև այն դեպքը, որ երեխան լուցկիով վառել էր փափուկ խաղալիքը, ինչի արդյունքում հրդեհ էր բռնկվել սենյակում և կիսով չափ այրվել մահճակալն ու վարագույրները: Բարեբախտաբար տատիկը ժամանակին օգնության էր հասել և երեխան չէր տուժել:

Երեխայի հետ անհատական զրույցի փոխորեն նախընտրեցի շաբաթվա թեմատիկ պլանավորումը համապատասխանեցնել գործնականի հետ՝ <<Անվտանգ վարքագիծ>> թեմայով, իսկ շաբաթվա վերջում անցկացրի բաց պարապմունք ծնողների ներկայությամբ, որը կներկայացնեմ ստորև:

Ինչու՞ է մեզ անհրաժեշտ հասկանալ երեխաների բացասական վարքի հիմքում ընկած պատճառները և մոտիվացիաները:

Մեծահասակները կարող են անհանգստություն զգալ, երբ երեխաները չարաճճի կամ անպատշաճ վարք են դրսևորում, կամ վարքագծային խնդիրներ ունեն: Նրանք կարող են խիստ միջոցներ ձեռնարկել, փորձելով փոխել կամ դադարեցնել այն, ինչն իրենք համարում են արտառոց վարք:

Շատ մարդիկ մտածում են, որ երեխաները կամ ի ծնե չարաճճի են, կամ այդպիսին են դառնում որոշակի արտաքին գործոնների ազդեցությամբ, օրինակ՝ ծնողների «երես տալու», չափազանց աղքատ կամ չափազանց հարուստ ընտանիքից լինելու, կամ «վատ» ընտանիքում մեծանալու արդյունքում:

Սակայն, բոլոր վարքաձևերը, ներառյալ երեխաների բացասական կամ անպատշաճ վարքը, *ուղղված է որոշակի նպատակի և ունի հիմնարար պատճառ*: Բացասական վարքի պատճառը և/կամ նպատակը բացահայտելով, մենք կարող են հասկանալ, թե ինչու՞ է երեխան տվյալ կերպ վարվում, և այսպիսով հնարավորություն կունենաք արդյունավետ կերպով արձագանքել իրավիճակին:

Պետք է նկատել, որ երեխաները միշտ չէ, որ տեղյակ են իրենց արտառոց վարքի հիմնարար պատճառների մասին: Եթե նրան հարցնում են, թե ինչու՞ է նա տվյալ կերպ վարվում, երեխան հաճախ պատասխանում է, որ չգիտի, կամ կարող է բոլորովին անտեղին պատճառաբանություն կամ բացատրություն տալ:

Ի՞նչ պետք է անեն մեծահասակները

ա. Բացահայտեն երեխաների բացասական վարքի հիմնական նպատակները

- Մեծահասակները պետք է վերլուծեն *իրենց սեփական զգացմունքները*: Եթե նրանք զայրացած կամ անհանգստացած են, ապա ամենայն հավանականությամբ երեխան փորձում է նրանց ուշադրությունը գրավել; եթե իրենք զայրացած են, երեխան հավանաբար փորձում է իր իշխանությունցը ցույց տալ; եթե իրենք վիրավորված են զգում, ապա երեխան փորձում է վրեժ լուծել; իսկ եթե հիասթափված և սպառված են զգում, ապա երեխան հնարավոր է փորձում է խուսափելու միջոցով արտահայտել իր անհամարժեքության զգացումը :
- Դուք պե՛տք է վերլուծեք *երեխայի արձագանքը* մեծահասակների՝ իր վարքը փոխելուն ուղղված ջանքերին:

բ. Մեծահասակների արձագանքը

Երբ երեխաները բացասական վարք են դրսևորում, մեծահասակները կարող են տարբեր միջոցներով փորձել ազդել նրանց վրա և փոխել նրանց վարքը: Այս միջոցները կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Պետք է նշել, որ երեխաների բացասական վարքի վերոհիշյալ չորս հիմնական նպատակներից յուրաքանչյուրը կարող է պատճառ դառնալ երեխային ֆիզիկապես կամ հոգեպես պատժելու:
Նման իրավիճակներն արդյունավետ կերպով հարթելու համար լավագույն սկզբունքներն են հանգստություն պահպանելը, փորձելը հասկանալ և հարգել երեխային, դրական դաստիարակչական մոտեցումներ կիրառելը , դրականորեն լսելը խրախուսելը , և ինքնատիրապետումը:

գ. Ի՞նչ պետք է անեն մեծահասակները երեխայի պատժելու փոխարեն

- Եթե երեխան փորձում է *ուշադրություն գրավել,* մեծահասակները պետք է.
  - Հնարավորության դեպքում չնկատեն այս վարքը, սակայն երեխային ուշադրություն հատկացնեն, երբ նա լավ վարք է դրսևորում:
  - Առանց բառ արտասանելու խիստ նայեն երեխային:
  - Երեխային ուղղորդեն դեպի ավելի դրական վարքաձևերը:
  - Հիշեցնեն երեխային այն աշխատանքի մասին, որ նա պետք է կատարի; երեխային պոտենցիալ ընտրություններ տվե՛ք:
  - Ռեժիմ սահմանեն, ըստ որի մեծահասակները պարբերաբար ժամանակ կանցկացնեն երեխայի հետ:

- Եթե երեխան *իշխանություն է դրսևորում,* մեծահասակները պետք է.
    - Փորձեն պահպանել հանգստությունը, և չներգրավվել իշխանության պայքարի մեջ, հնարավորություն տալով երեխային հանդարտվել: Հիշե՛ք, որ վեճի համար պահանջվում է առնվազն երկու մարդ:
    - Միջոցներ ձեռնարկեն երեխային համագործակցության մղելու համար: Հասկանան երեխաների զգացմունքները և ցույց տան, որ իրենք նրանց հասկանում եք: Կիսեն տվյալ իրավիճակի հետ կապված իրենց զգացմունքները: Քննարկեն, թե ինչպես կարելի է ապագայում խուսափել նման խնդիրներից:
    - Օգնեն երեխային հասկանալ, որ նա կարող է իր իշխանությունը և ուժը օգտագործել առավել կոնստրուկտիվ կերպով: Հիշեցե՛ք, որ երեխայի իշխանությունը կոտրելը կամ նրան զիջելը երեխային մղելու է հետագայում ևս փորձել իշխանություն դրսևորել:
    - Որոշե՛ք այն, ինչ դուք եք անելու, բայց ո՛չ այն, ինչ փորձելու եք ստիպել երեխային անել:
    - Ռեժիմ սահմանեն, ըստ որի մեծահասակը պարբերաբար ժամանակ կանցկացնի երեխայի հետ:

- Եթե երեխան *վրեժ է լուծում*, մեծահասակները պետք է.
    - Համբերատար լինեն: Դուրս գան հակահարվածների ցիկլից: Խուսափեն պատժից:
    - Ընկերական վերաբերմունք դրսևորեն և սպասեն, մինչև երեխան կհանդարտվի:
    - Խրախուսեն համագործակցությունը: Երեխայի հետ վստահության հարաբերություններ ստեղծեն:
    - Համագործակցեն երեխայի հետ խնդիրները լուծելու ուղղությամբ:
    - Խրախուսեն երեխային, ցույց տան նրան, որ նա սիրված և հարգված է:
    - Ռեժիմ սահմանեն, ըստ որի մեծահասակը պարբերաբար ժամանակ կանցկացնի երեխայի հետ:

- Եթե երեխան *անհամարժեքության զգացում է արտահայտում*, մեծահասակները պետք է.
    - Խուսափեն անհամաձայնություն արտահայտելուց կամ քննադատությունից:
    - Ժամանակ հատկացնեն պարապմունքների կամ արտադասարանական աշխատանքի, հատկապես դասասերտման համար:
    - Դասը բաժանեն մի քանի փոքր մասերի, և օգնեն երեխային սկսել ամենահեշտերից՝ նախնական հաջողության համար:
    - Խրախուսեն երեխային, կենտրոնանան երեխայի ուժեղ կողմերի և ներքին արժեքների վրա է /Գլուխ 6/:
    - Խուսափեն խղճահարություն կամ չափազանց շատ կարեկցանք արտահայտելուց՝ պետք չէ հուսահատվել:
    - Պարբերաբար ժամանակ անցկացնեն երեխայի հետ՝ նրան օգնելու համար:

Գլուխ 3

Հետազոտական աշխատանքի ընթացքը

Ավագ խումբ, դաստիարակ՝ Նելի Գրիգորյան

Բաց պարապմունք – <<Ինձ շրջապատող աշխարհը >>մեթոդիկայից

Ներկաներ՝ *Մանկավարժական անձնակազմ, ծնողներ*

Երեխաների թիվը՝ *44 (քառասունչորս)*

Տևողությունը՝ *քառասուն րոպե*

Թեմա՝ *<<Լինենք անվտանգ>>*

Նպատակ՝ *Օգնել երեխաներին կողմնորոշվել և գործել արտակարգ իրավիճակներում, սովորեցնել նրանց պատահարների դեպքում ցուցաբերել տարրական առաջին օգնություն, ինչպես նաև ճանաչել վտանգավոր իրավիճակները և կանխել դժբախտ պատահարները:*

Կապը չափորոշիչների հետ

Խոսքի և հաղորդակցման ոլորտ

ա) Սանը հորինում և կապակցված ներկայացնում է փոքրիկ պատմություններ, նկարագրում և բացատրում է որևէ երևույթ:

Իմացական ոլորտ

ա) Սանը վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը, ներկայացնում է իր պատկերացումներն ու վերաբերմունքը:

բ) Նկարագրում և մեկնաբանում է շրջապատող միջավայրում ընթացող երևույթները, սեփական որոշումներն ու գործողությունները:

Հուզական սոցիալ-անձնային ոլորտ

ա) Սանն արտահայտում է իր հույզերն ու զգացմունքները բառերով և հաղորդակցման ոչ բառային ձևերով:

Ինքնասպասարկման , անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

դ) Դրսևորում է ֆիզիկական ակտիվության կարողություններ, ներկայացնում է առողջության և կյանքի համար հնարավոր վտանգները, դրանց հաղթահարման ուղիներն ու միջոցները:

ե) Ունի տարրական գիտելիքներ աղետների և դրանց հետևանքների մասին:

է) Ունի տարրական գիտելիքներ վնասակար սովորությունների հետևանքների մասին:

թ) Հիմնավորում է տանը, միջավայրում, փողոցում անվտանգության կանոններին հետևելու անհրաժեշտությունը:

Ակնկալվող վերջնարդյունքներ՝ *Կարողանա կողմնորոշվել և գործել արտակարգ իրավիճակներում, պատահարների դեպքում ցուցաբերի տարրական առաջին օգնություն, ինչպես նաև ճանաչի վտանգավոր իրավիճակները և կանխի դժբախտ պատահարները:*

Անհրաժեշտ պարագաներ՝ *Ստվարաթղթե ծառ՝ փչակով, խաղալիք սկյուռ և կապիկ, գազօջախ, արհեստական տորթ, թղթե <<կրակ >>, հրդեհավտանգ իրավիճակներ ներկայացնող նկարներ, խաղալիք հրշեջ ջրցան մեքենա, հրշեջի հագուստ, քարտեր, որոնց վրա պատկերված են տարբեր առարկաներ, հրդեհավտանգ իրավիճակներ ներկայացնող միջավայրեր, երկու գրատախտակ, շչակի ձայն (ձայնագրություն):*

Ընթացքը– *Երեխաները նստում են կիսաշրջանաձև*

Դաստիարակ- Երեխաներ, ինչպես տեսնում եք այսօր հյուրեր ունենք, եկեք բարևենք նրանց: (Բարևում են)

Մինչ պարապմունքն սկսելը եկեք միմյանց ժպտանք և իրար փոխանցենք մեր սերն ու ջերմությունը: (Ժպտում են)

Խթանման փուլ

Ես գիտեմ, որ դուք շատ եք սիրում հեքիաթներ, դե ուրեմն հարմար տեղավորվեք և ուշադիր լսեք:

Լինում է, չի լինում մի փոքրիկ սկյուռիկ: Նա բնակվում էր մի հաստաբուն ծառի փչակում: Իր ծննդյան տարեդարձին սկյուռիկը որոշում է համեղ տորթ պատրաստել և հրավիրել անտառի բնակիչներին: Սկյուռիկը խմոր է պատրաստում, միացնում գազօջախը, խմորը տեղավորում ջեռոցի մեջ (ցույց տալ յուրաքանչյուր գործողությունը),որպեսզի թխվի:

Այնուհետև որոշում է գնալ անտառ՝ մրգեր ու հատապտուղներ հավաքելու հյուրասիրության համար: Մինչ սկյուռիկն անտառում միրգ է հավաքում, ջեռոցում խմորեղենն այրվում է, մոխրանում, հետո փչակի մեջ հրդեհ է բռնկվում (փչակի վրա կրակի նկարներ փակցնել պատմելուն զուգահեռ): Կրակը փչակից անցնում է ծառին և սկսվում է ծառը նույնպես այրվել: Բարեբախտաբար այդ ընթացքում անտառով անցնում էր հրշեջ կապիկը: Նա նկատում է հրդեհը և առանց ժամանակ կորցնելու իր ջրցան սարքի օգնությամբ մարում կրակը:
Սկյուռիկն անտառից վերադառնում է և ի՞նչ տեսնում՝ ամբողջ ծառն այրված: Նա շատ է տխրում, բայց ի՞նչ արած, արդեն ոչինչ հետ բերել չէր կարող…

Երեխաներ, ձեզ դու՞ր եկավ հեքիաթը:

Երեխաներ-Այո՛

Դաստիարակ- Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞նն է սկյուռիկի տրամադրությունը:

Երեխաներ- Մտահոգ, ընկճված, տխուր, հուզված, վատ և այլն…

Դ.-Որպեսզի մեր սկյուռիկը շատ չտխրի, եկեք մասնակից դարձնեք մեր պարապմունքին, իսկ ավարտից հետո բոլորս միասին կնշենք նրա տարեդարձը (դաստիարակը սկյուռին նստեցնում է երեխաների մոտ):

Եկեք վերլուծենք սկյուռի կատարած գործողությունները, քննարկենք հետևանքները:

Ե.- Սկյուռիկը չպետք է առանց գազօջախն անջատելու դուրս գար փչակից:
Ե.-Սկյուռիկն իր անզգուշության պատճառով փչացրեց ծննդյան տարեդարձն ու կորցրեց բույնը:

Ե.- Քանի որ սկյուռիկը չէր պահպանել անվտանգության կանոնները, հնարավոր էր ամբողջ անտառն այրվեր:

Իմաստի ընկալման փուլ

Դ.-Ապրեք , դուք շատ ճիշտ ներկայացրիք իրավիճակը: Շատ հաճախ, երբ չեն պահպանում անվտանգության կանոնները, աղետ է տեղի ունենում , իսկ աղետները լինում են և՛ մարդկանց անզգուշության պատճառով և՛ բնության կողմից, որոնք կոչվում են բնական աղետներ. դրանք են՝ երկրաշարժ, հրաբուխ, ջրհեղեղ, փոթորիկ, իսկ մարդկանց պատճառով առաջացածը՝ պատերազմ , հրդեհ և այլն(գրատախտակին ցույց տալ յուրաքանչյուր աղետին համապատասխանող նկարներ):
Այս բոլորը այլ կերպ կոչվում են <<Արտակարգ իրավիճակներ>>:

Ֆիզկուլտդադար

Երբ աղետն է հյուր գալիս,

Մենք պետք է լավ պաշտպանվենք,

ԵՎ վտանգների դեպքում ,

Ընկերներին միշտ օգնենք (ձեռքերը դնել ընկերոջ ուսին):

Երբ հրդեհ է բռնկվում,

Քիթն ու բերանն ենք փակում ,(փակել քիթն ու բերանը հագուստի փեշով),

Կրակից հեռանալով

Դեպի փողոց ենք վազում,(վազվզել դահլիճով մեկ):

Երկրաշարժ է երբ լինում,

Ապահով տեղ թաքնվում,(մտնել աթոռների տակ),

Իսկ երբ վտանգն է անցնում՝

Նստում ենք, հանգստանում (նստել տեղերում):

Դ.- Արտակարգ իրավիճակներից այսօր կխոսենք հրդեհի մասին: Ի՞նչ է հրդեհը:

Ե.- Կրակ

Դ.-Ի՞նչ օգուտ է տալիս կրակը: Նայեք նկարներն ու ներկայացրեք:

Ե.-Կրակի օգնությամբ տաքացնում են բնակարանները, մանկապարտեզները:

…գազօջախին մայրիկները, տատիկները ճաշ են պատրաստում:

…մութ անտառում կարող ենք ստանալ ոչ միայն ջերմություն, այլև լուսավորություն:

…երկինք են բարձրանում օդապարիկները, տիեզերք են թռչում հրթիռներն ու արբանյակները:

…եթե անտառում մոլորվել ես, կարող ես կրակ վառել, ծխի օգնությամբ քեզ կարող են գտնել:

Դ.- Տեսնու՞մ եք ինչ կարևոր է կրակը մարդու համար: Սակայն կրակը կարող է լինել ինչպես օգտակար, բարի, այնպես էլ՝ չա՛ր, դաժա՛ն, եթե նիա հետ ճիշտ չվարվենք: Նա կարող է այրել տներ, անտառներ, դաշտեր, մարդիկ կարող են այրվածքներ ստանալ:

Հիմա նայելով նկարներին, եկեք ներկայացնենք այն իրավիճակները, որոնցից կարող են հրդեհներ առաջանալ:

Ե.- Երեխաներին չի՛ կարելի խաղալ լուցկիով, կրակայրիչով, պայթուցիչներով, այլապես կվնասեն և՛ իրենց և՛ հրդեհ կառաջացնեն:

-Չի՛ կարելի կրակի մեջ նետել անծանոթ առարկաներ, հակառակ դեպքում պայթյուն կառաջանա և հրդեհ կբռնկվի:

-Առանց մեծերի օգնության չի՛ կարելի միացնել էլեկտրական սարքավորումներ՝ արդուկ, հեռուստացույց, էլեկտրական թեյնիկ, միկրոալիքային վառարան և այլն:

-Անտառում խարույկ վառելուց և խորոված անելուց հետո պետք է ջրով կամ ավազով հանգցնել կրակը, որպեսզի անտառը չհրդեհվի:

-Ինքնուրույն չի՛ կարելի միացնել գազօջախը և կրակին մոտ չի՛ կարելի չորացնել խոնավ հագուստը:

Կշռադատման փուլ

Դիդակտիկ խաղ՝ <<Ընտրի՛ր ճիշտ տարբերակը>>

Երեխաներից յուրաքանչյուրը վերցնում է մեկական նկար, որոնց վրա տարբեր առարկաներ են պատկերված: Այն նկարները, որոնց վրա պատկերված են այնպիսի առարկաներ, որոնք կարուղ են օգտագործել երեխաները, անհրաժեշտ է փակցնել աջ կողմի գրատախտակին: Իսկ այն նկարները, որոնց վրա պատկերված առարկաները չի կարելի օգտագործել առանց մեծերի օգնության, պետք է փակցնել ձախ կողմի գրատախտակին:

Դ.- Եվ այստեղից ի՞նչ եզրահանգման եկա՞նք՝ եթե չպահպանենք անվտանգության կանոնները, կարող ենք հրդեհ առաջացնել, իսկ հրդեհի վնասակար հետևանքներին դուք արդեն ծանոթացաք: Սակայն, եթե այնուամենայնիվ հրդեհ է առաջացել ինչպե՞ս պետք է վարվենք, որպեսզի հնարավորինս քիչ տուժենք:

Դաստիարակը երեխաներին ուղղորդում է դեպի դահլիճի տարբեր կողմերում ստեղծած միջավայրները, որտեղ <<հրդեհ>> է բռնկվել: Երեղաները ներկայացնում են, թե ինչպես պետք է վարվել և կատարում համապատասխան գործողություններ:

Ե.-Հրդեհի դեպքում չի՛ կարելի թաքնվել պահարանի մեջ կամ մահճակալի տակ, առանց խուճապի պետք է արագ վազել կրակին հակառակ ուղղությամբ (վազում են) և տեղեկացնել մեծահասակներին:

-Հրդեհի դեպքում անհրաժեշտ է քիթն ու բերանը փակել խոնավ կտորով կամ որևէ շորով, կամ էլ հագուստի փեշով (փակում են), որպեսզի ծխի հոտից չթունավորվենք:

- Եթե ծխի հոտ եք զգում շենքի մուտքից, պետք չէ դուռը բացել, այլապես կրակը և ծուխը կլցվեն տուն: Ավելի ճիշտ է դռան մոտից հեռանալ և պատուհանից օգնություն կանչել:

- Եթե ձեր հագուստն է վառվում, անհրաժեշտ է պառկել գետնին և թավալվել, որպեսզի կրակը հանգցնեք (երեխաները պառկում են գետնին և թավալվում):

- Եթե վառվում է որևէ էլեկտրական սարքավորում, պետք է անջատել հոսանքի լարից և ծածկել ծանր կտորով (օրինակը ցույց տալ տիկնիկի անկյան արդուկի վրա):

-Հնարավորության դեպքում անհրաժեշտ է զանգահարել հրշեջ ծառայություն՝ 101 և տեղեկացնել հրդեհի մասին, այնուհետև վազել փողոց (հեռախոսի վրա ցույց տալ թվանշանները):

Դ.- Իսկ հրդեհի դեպքում ովքե՞ր են օգնության հասնում:

Ե.- Հրդեհի դեպքում օգնության են հասնում հրշեջ ծառայության աշխատակիցները:

- Նրանք իրենց հրշեջ մեքենաների մեջ տեղակայված խողովակներում լցված ջրով մարում են կրակը:

- Հրշեջները վտանգելով իրենց կյանքը՝ հրդեհից փրկում են մարդկանց, կենդանիներին:

Երգ- <<Մենք փոքրիկ հրշեջներ ենք>> (հեղինակային)

Ներս է մտնում հրշեջի համազգեստով և խաղալիք հրշեջ մեքենայով երեխա:

-Բարև ձեզ, երեխաներ, ես շատ ուրախ եմ, որ դուք այդքան բան գիտեք հրշեջների մասին: Գիտե՞ք, որ մենք՝ հրշեջներս քաջ ենք ու անվախ, կրում ենք այնպիսի հագուստ, որ կրակից չի այրվում: Իսկ հիմա լսելով <<տագնապ>> ազդանշանը, պետք է առանց խուճապի արագ տարհանվենք դեպի մանկապարտեզի բակ՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Լսվում է ազդանշանը և երեխաները, ծնողները և ողջ անձնակազմը հնարավորինս արագ վազում են բակ:

Պարապմունքի ավարտից հետո ծնողներից մեկի ավտոբուսով այցելություն կատարեցինք Գորիսի փրկարար ծառայություն՝ մոտիկից ծանոթանալու ծառայության աշխատանքներին, որտեղ ջերմությամբ ու սիրով հյուրընկալեցին մեզ: Երեխաների ոգևորությունը, հետաքրքրությունը, զարմանքն ու հրճվանքը մեկտեղել էին: Աշխատակիցներն անտրտունջ ցուցադրեցին այն ամենը, ինչը կարող էր հետաքրքրել փոքրիկներին:

Ամենատպավորիչն այն էր, որ փոքրիկ Էրիկը ոգևորությամբ հայտարարեց, որ երբ մեծանա, հրշեջ է դառնալու, որպեսզի հրդեհներ մարի և փրկի մարդկանց, հատկապես երեխաներին:

ԼԵՆՔ
ԱՆԿՏԱՆԳ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տնօրեն՝ Ս.Ադունցի վերլուծությունը պարապմունքի վերաբերյալ

Ներկա գտնվելով պարապմունքին, ես միանշանակ կարող եմ նշել , որ դաստիարակը հասել է իր առջև դրված նպատակին և վերջնարդյունքին: Խմբում ունենալով թվով քառասունչորս երեխա, նա այնպիսի ճկուն և գրագետ մոտեցումներով և համապատասխան մեթոդներով անցկացրեց պարապմունքը և բոլոր երեխաներին անխտիր ներգրավեց գործընթացի մեջ, որ երեխաների հսկայական թիվը փոքրիկ դահլիճում գրեթե չնկատվեց: Ընտրված դիդակտիկ պարագաները, թեմային համապատասխան տպավորիչ միջավայրները, դաստիարակի գրագետ խոսքը, երեխաների հետ վարվեցողությունը լիովին փաստում է նրա փորձառու տեսակի մասին:

Երեխաներն այնքան անկաշկանդ էին, միաժամանակ կլանված լսում էին դաստիարակի յուրաքանչյուր խոսքը, կատարում հանձնարարությունները: Նախադասությունները կազմում էրն գրագետ, հիմնավորում և անսխալ ներկայացնում դեպքերն ու իրադարձությունները, միաժամանակ գտնում նրանց միջև պատճառահետևանքային կապերը:

Դաստիարակը ոչ միայն երեխաների, այլև նրանց ծնողների հետ տանում է աշխատանքներ, որոնք միտված են ի շահ երեխաների բարօրության: Թեման շատ արդիական էր, և ես համոզված եմ, որ այս պարապմունքին ստացած գիտելիքները կուղեկցեն երեխաներին ողջ կյանքի ընթացքում:

Հոգեբան՝ Լ.Յոլյանի վերլուծությունը պարապմունքի վերեբերյալ:

«Անվտանգ վարքագիծ» բաց դասին դաստիարակ՝ Նելի Գրիգորյանը հրդեհային անվտանգության ոլորտում տարրական գիտելիքներ և հմտություններ սերմանեց: Դասի ընթացքում դաստիրակը՝

· զարգացրեց երեխաների մոտ «հրդեհային անվտանգության» հայեցակարգը:

· համախմբեց հրդեհի պատճառների մասին գիտելիքները:

· զարգացրեց հրդեհի դեպքում վարքագծի հիմնական հմտություններ:

· համախմբեց գիտելիքները հրդեհի օգուտների և վտանգների, հրդեհային անվտանգության կանոնների մասին:

· երեխաներին ծանոթացրեց էլեկտրական սարքավորումներին՝ ընդգծելով, որ դրանք կարող են օգտագործել միայն մեծերը:

Պարապմունքի ընթացքում դաստիարակը կարողանում էր երեխաները մոտ պահպանել բարիդրացիական հարաբերություններ, ձևավորել հարգանք հրշեջների աշխատանքի, մարդկանց կյանքում վերջիններիս կարևորության նկատմամբ:

Պարապմունքի ավարտին ամփոփիչ հարցերից ավելի քան պարզ էր,որ երեխաները հստակ գիտակցում են , որ հրդեհային անվտանգության կանոնների պահպանումը պարտադիր է՝ միշտ և ամենուր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ նախադպրոցական տարիքը կարևորագույն փուլերից է մարդու հետագա զարգացման համար: Այս տարիքը հարուստ է նորագոյացություններով: Երեխան նոր սկսում է ճանաչել աշխարհն ու մարդկանց և դրանով էլ պայմանավորված են բազում փորձություններ, որը հաղթահարում է նախադպրոցականը մեծահասակի օգնությամբ: Իմ՝ դաստիարակի կողմից ընտրված պարապմունքի թեման բավականին արդիական է, չէ՞ որ միջավայն այսօր առաջադրում է բազում վտանգավոր իրադրություններ, որի նկատմամբ շատ հաճախ երեխան հմտություն ու ռեսուրս չունի, որպեսզի հաղթահարի: Մենք ունենք խնդիր. երեխային՝ նախադպրոցականին, սովորեցնելու անվտանգ վարքագծի ձևեր, որն ***արդիական*** խնդիր է հատկապես վերջին ժամանակներում: Լինելով սեյսմիկ անկայուն գոտում, բարդ աշխարհաքաղաքական դիրքում, մենք ունենք այդ հարցերը կարգավորելու խնդիր և դա պետք է սկսել վաղ տարիքից: Բացի այդ առօրյայում ևս ունենք բազում վտանգավոր իրադրություններ, որին ևս պետք է պատրաստենք նախադպրոցականին:
Սակայն առանց ծնողի օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումն օգնում է դաստիարակին տեղյակ լինել, թե ի՞նչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության , վարքի և տրամադրության վրա: Դա դաստիարակին թույլ է տալիս հասկանալ և օգնել երեխային: Ընդ որում օգնության կարիքը զգում են ոչ միայն երեխաները, այլև ծնողները: Անհրաժեշտ է նրանց գիտակցությանը հասցնել, որ իրենց կողքին են դաստիարակները, ուսուցիչները, մյուս ծնողներն ու ընկերները:

Կրթությունն սկսվում է նախակրթարանից: Մանկապարտեզում է սկսում ձևավորվել երկրի ապագա քաղաքացին: Մեր պատկերացումներում և ըստ սրբազան ավանդության ՝ ***դրախտը*** ևս հանդես է գալիս որպես մի ***պարտեզ***: Փոքրիկ մի դրախտ է մեր մանուկների համար նրանց պարտեզը, և մենք պարտավոր ենք այն ունենալ որպես այդպիսին***: Ամեն ինչ մեր երեխաներին*** կարգախոս-մաղթանք-պատվիրան-երդումը կիրառենք ըստ էության. կայացնենք մեր նախակրթարանն ու դպրոցը և կունենանք մեր երազած հայրենիքը՝ իր ողջ վեհությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Մանկակենտրոն դասասեյակների ստեղծումը

2.Նախադպրոցական կադրերի վերապատրաստման փաթեփ

3.Նախաշավիղ 2012 թ.

4.100 խմբագրական հայեցի դաստիարակության գաղափարաբանական նմուշներ

5. Козлова С.А., Куликова Т.А. ‘’Дошкольная педагогика,, Учеб. пособие для студ. сред, пед. учеб. заведений. - 2-е изд., перераб. и доп. - М.: Издательский центр «Академия», 2000:

6.https://cloud.mail.ru/attaches/17006732021448422927%3B0%3B1?folder-id=0&x-email=dolunc1972%40mail.ru&cvg=f